ԿԱՐԾԻՔ

Մանան Պայքարի Աղաբեկյան

Բազմախոսության հնչյունական-գործաբանական առանձնահատկությունները (բրիտանական քաղաքական-հասարակական թոք-շոուների հիման վրա)

թեմայով

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում զանգվածային հաղորդակցության միջոցները կարևոր դեր են կատարում հասարակական կարծիքի ձևավորման, քաղաքական գործընթացների լուսաբանման և հանրային քննարկումների կազմակերպման գործում: Այդ համատեքստում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում քաղաքական-հասարակական թոք-շոուները, որոնք հանդես են գալիս որպես հանրային հաղորդակցության ակտիվ հարթակներ՝ միավորելով տարբեր սոցիալական, քաղաքական և մասնագիտական դիրքորոշումներ ներկայացնող մասնակիցների: Նման հաղորդակցական միջավայրում ձևավորվում է բազմախոսություն, որը բնութագրվում է խոսքի հերթափոխի դինամիկությամբ, փոխազդեցության բազմաշերտությամբ և լեզվական տարբեր միջոցների ակտիվ կիրառմամբ:

Բազմախոսական հաղորդակցությունը լեզվաբանական ուսումնասիրությունների համար ներկայացնում է կարևոր հետաքրքրություն, քանի որ այն արտացոլում է խոսքային փոխազդեցության իրական ընթացքը՝ իր հնչյունական, գործաբանական և հաղորդակցական առանձնահատկություններով: Մասնավորապես քաղաքական-հասարակական թոք-շոուներում բազմախոսությունը դրսևորվում է ոչ միայն խոսքի բովանդակային կողմում, այլև հնչերանգային կառուցվածքում, շեշտադրական միջոցների

ընտրության, խոսքի հերթափոխի կազմակերպման և հաղորդակցական ռազմավարությունների կիրառման մեջ:

Այս առումով բազմախոսության հնչյունական և գործաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ժամանակակից մեդիա խոսույթի կառուցվածքի և գործառության ավելի խորքային ըմբռնման համար:

Հենց այս տեսանկյունից էլ ներկայացված ատենախոսությունը արդիական և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որի **նպատակն** է բացահայտել բազմախոսության հնչյունական-գործաբանական առանձնահատկությունները բրիտանական քաղաքական-հասարակական թոք-շոուների նյութի հիման վրա:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է բազմախոսական հաղորդակցության նկատմամբ ժամանակակից լեզվաբանության աճող հետաքրքրությամբ և խմբային խոսքային փոխազդեցության հնչերանգային առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Այն նաև բխում է այն հանգամանքից, որ ի տարբերություն քաղաքական խոսույթի բառային և խոսույթային կողմերի՝ հնչյունագործաբանական և առոգանական առանձնահատկությունները համեմատաբար քիչ են ուսումնասիրվել: Ուստի բազմախոսական խոսույթում կիրառվող հնչերանգային միջոցների ուսումնասիրությունը կարևոր է քաղաքական-հասարակական հաղորդակցության ռազմավարությունների առավել ամբողջական բացահայտման համար:

Ատենախոսության գիտական **նորույթը** պայմանավորված է խմբային հաղորդակցման հնչերանգային առանձնահատկությունների համակարգային նկարագրությամբ: Աշխատանքում հակադրվել են խոսքային գործունեության մենախոսական, երկխոսական և բազմախոսական ձևերը, ներկայացվել է հեռուստատեսային խոսույթի ժանրային դասակարգումը և առանձնացվել են թոք-շոու ժանրի լեզվական ու արտալեզվական հատկանիշները՝ այն դիտարկելով որպես բազմախոսություն: Ուսումնասիրության մեջ ներկայացվել է նաև քաղաքական-վերլուծական խոսույթում համագործակցային և կոնֆլիկտային ռազմավարությունների

հնչերանգային նկարագիրը՝ հիմնված լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծությունների համադրության վրա:

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել բազմախոսությունը որպես բարդ հաղորդակցական և լեզվամշակութային երևույթ՝ վերհանելով դրա լեզվական և արտալեզվական հատկանիշները, ինչպես նաև առանձնացնել և նկարագրել այն հնչերանգային միջոցները, որոնց գործածությունը քաղաքական-հասարակական թոք-շոուների շրջանակում նպաստում է խոսողի հաղորդակցական ռազմավարությունների և մարտավարությունների իրականացմանը:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են մի շարք խնդիրներ, որոնց ճիշտ լուծումները պայմանավորում են հետազոտության տեսական և գործնական արժեքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով և ծանոթագրություններով, եզրակացությունից, գրականության ցանկից և ընտրված թոք-շոուների սղագրությունը ներկայացող հավելվածից:

Առաջին գլխում բազմախոսությունը ներկայացվում է որպես խոսքային գործունեության ինքնուրույն ձև՝ դիտարկելով դրա տեսակները, ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները: Քննարկվում է բազմախոսություններում մասնակիցների դերային բաշխումը՝ առաջարկելով առավել համապարփակ դասակարգում, որը ներառում է մոդերատորի, առաջնորդի և մեկնաբանի դերերը: Ուսումնասիրվում են նաև բազմախոսական հաղորդակցությանը բնորոշ հասցեագրման ձևերն ու փոխազդեցությունը, ինչպես նաև քաղաքական խոսույթի շրջանակում դրա ազդեցիկ բնույթը: Առանձին ուշադրություն է դարձվում թոք-շոու ժանրին և բազմախոսական հաղորդակցության ռազմավարություններին՝ ներառյալ համագործակցային և կոնֆլիկտային մոտեցումները:

Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում փորձառական-հնչյունական հետազոտության մեթոդաբանությանը: Ատենախոսը ներկայացնում է գործաբանական վերլուծության մոտեցումը՝ դասակարգելով կոնֆլիկտային, համագործակցային և չեզոք ռազմավարություններն ու մարտավարությունները, ինչպես նաև առոգանության ուսումնասիրության ժամանակակից մոտեցումները՝ շեշտադրելով «ինչ է ասվում» և

«ինչպես է ասվում» գործոնների միասնությունը: Քննարկվում են արտահայտչական և վերաբերմունքային հնչերանգների տարբերությունները՝ ընդգծելով հնչերանգի փոխլրացնող դերը գործաբանական իմաստի ձևավորման մեջ, ինչպես նաև դրա հարաբերական անկախությունը բառաքերականական միջոցներից: Վերջում ներկայացվում են ուսումնասիրության նյութը, վերլուծության փուլերն ու մեթոդները՝ ներառյալ ընկալողական, լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծությունը:

Երրորդ գլխում քննարկվում են հասարակական-քաղաքական բազմախոսությունների շրջանակում կիրառվող կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունների ու մարտավարությունների առոգանական դրսևորումները: Հնչյունական վերլուծության արդյունքում բացահայտվել են կոնֆլիկտային և համագործակցային բազմախոսություններում կիրառվող ռազմավարությունների և մարտավարությունների հնչերանգային առանձնահատկությունները՝ ընդգծելով միջուկային տոնի, սանդղակի և նախասանդղակի բնութագրերը, արտահայտչական շեշտերի դերը, խոսքի տեմպի և դադարների յուրահատկությունները, ռիթմի փոփոխությունները, ինչպես նաև ձայներանգի կիրառությունը՝ հաղորդակցական նպատակների իրականացման համատեքստում: Ուշագրավ է միջուկային տոնների լսողական վերլուծության արդյունքում վեր հանած միջուկային տոնների բազմազանությունը: Գնահատելի է այն, որ գործնական նյութի բազմակողմանի վերլուծությունը անցկացվել է մի շարք փուլերով՝ խոսույթային վերլուծության, գործաբանական, ընկալողական, լսողական, էլեկտրաակուստիկ և քանակական: Ատենախոսության համար առանձնակի կարևորություն ունի և այն հանգամանքը, որ ատենախոսը ռազմավարությունների և մարտավառույնների լսողական վերլուծության միջոցով ստացած արդյունքները համադրել է էլեկտրոակուստիկ արդյունքների հետ, ինչը հանգեցրել է վստահելի և ստուգելի արդյունքների: Հեղինակը անկասկած կատարել է իր առջև դրված խնդիրները՝ հիմնավոր կերպով ներկայացնելով թեմային առնչվող տեսագործնական նյութը:

Եզրակացության մեջ, ինչպես հարկն է, ամփոփվում են ատենախոսության սահմանված խնդիրներից բխող վերլուծության ընդհանուր և մասնավոր արդյունքները:

Բարձր գնահատելով հետազոտության կարևորությունը՝ կանգ առնենք նաև որոշ դիտողությունների և հարցադրումների վրա.

- Ինչպե՞ս է հնչերանգը գործածվում որպես լրացուցիչ միջոց բազմախոսությունում՝ միջգործակցային իմաստների և նրբերանգների փոխանցման գործընթացում:
- Որքանո՞վ են հնչերանգային առանձնահատկությունները նշանակալի հաղորդակցական ռազմավարությունների ու մարտավարությունների արդյունավետ իրականացման գործում գործաբանական տեսանկյունից:
- Ինչպես են արտահայտվում մասնակիցների հուզական ներգրավվածությունը և նրանց վերաբերմունքը մյուսների նկատմամբ հնչերանգային և գործաբանական միջոցների միջոցով բազմախոսության ընթացքում:

Կատարված հետազոտությունը գրագետ, գիտական լեզվով շարադրված ավարտուն աշխատանք է, որի հիմնադրույթները պարունակում են գիտական նորույթ և հիմնավորված մոտեցումներ: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են յոթ գիտական հոդվածներում: Ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են յոթ հրապարակումներում իսկ սեղմագրում ամփոփված են ատենախոսության ներկայացված վերլուծության արդյունքները և եզրակացություններ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ ներառելով դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունն ու սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ներկայացված ատենախոսությունը բովանդակալից, ամփոփ տեսական և գործնական հետազոտություն է՝ հանգամանալից վերլուծություններով: Այդ են վկայում նաև հեղինակի հրատարակած հոդվածները, հետազոտության եզրակացությունները, ոլորտին առնչվող օգտագործված գրականության հարուստ ցանկը:

Այսպիսով, Մանան Պայքարի Աղաբեկյանի *Բազմախոսության հնչյունական-գործաբանական առանձնահատկությունները (բրիտանական քաղաքական-հասարակական թոք-շոուների հիման վրա)* թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով

համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հեղինակ Մանան Պայքարի Աղաբեկյանը արժանի է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
Անգլերենի հաղորդակցության ամբիոնի դեկան,
բ.գ.թ., դոցենտ — Սեդա Միխաիլի Գյուրջայանց

Հաստատում եմ Ս. Գյուրջայանցի ստորագրությունը:
ԲՊՀ-ի գիտքարտուղար՝ — Հ. Փիլավջյան

19.03.2026